

ПОЛИТИКА

Կազանյան փաստաթղթի հիմնական շեշտադրումները եվ Ռուսաստանի դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսլականում¹

Փաշայան Հրայր Ա.

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մեսրոպ Մաշտոց համալսարան (Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն)

hrayr.pashayan@mail.ru

ՀՏԳ 327

Հանգուցաբառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, «Կազանյան փաստաթուղթ», Ռուսաստանի Դաշնություն, անվտանգություն, կարգավիճակ, տարածքներ, հիմնախնդրի կարգավորման տեսլական:

Основные акценты Казанского документа и роль России в видении урегулирования Карабахского конфликта

Пашаян Грэйр А.

к. п. н., доцент, университет им. Месропа Маштоца (Степанакерт, Республика Арцах)

hrayr.pashayan@mail.ru

Аннотация. После достижений в войне против Арцаха в 2020 году военно-политическое руководство Азербайджана не упускает возможности считать вопрос карабахского конфликта закрытым. Однако проводимая Азербайджаном политика окончательного изгнания армян из Арцаха, заявления сопредседателей Минской группы ОБСЕ и других силовых центров по урегулированию конфликта показывают, что карабахский вопрос остается нерешенным, вопреки желаниям официального Баку.

В статье утверждается, что, исходя из императива хрупкой среды безопасности вокруг нашей страны, а также геополитических перестроек в регионе и мире, мы должны попытаться предпринять наши дальнейшие шаги в сотрудничестве с Россией, стремясь восстановить минимальные права Арцахские армяне. Лучшим способом решения этой проблемы в обозримом будущем может стать решение вопроса на принципах, изложенных в Казанском документе, с учетом как изложенных в нем, но еще не реализованных положений, так и роли Российской Федерации при составлении документа.

Несмотря на существующие, порой противоречивые взгляды, необходимо констатировать, что боевые действия были остановлены собственными усилиями России. Последующие события, в том числе размещение российских миротворцев в Нагорном Карабахе, показывают, что только Россия может быть гарантом безопасности нашей страны в обозримом будущем. Поэтому в отношениях с Россией мы должны исходить из практической политики, а не воображаемой. Необходимо найти выход, предпринять шаги в соответствии с взаимными интересами, уточнить территории, статус и другие вопросы, предусмотренные казанским документом, включая установление правоотношений с Россией.

Ключевые слова: Карабахский конфликт, «Казанский документ», Российская Федерация, безопасность, статус, территории, видение урегулирования конфликта.

The main emphasis of the Kazan document and Russia's role in the vision of the settlement of the Karabakh conflict

Pashayan Hrayr A.

Candidate of Political Science, Associate Professor,

Lecturer at Mesrop Mashtots University (Stepanakert, Republic of Artsakh)

hrayr.pashayan@mail.ru

Abstract. After the achievements in the war against Artsakh in 2020, the military-political leadership of Azerbaijan does not miss the opportunity to consider the issue of the Karabakh conflict closed. However, the policy pursued by Azerbaijan of the final expulsion of Armenians from Artsakh, the statements of the co-chairs of the OSCE Minsk Group and other power centers for the settlement of the conflict show that the Karabakh issue remains unresolved, contrary to the wishes of official Baku.

The article argues that, based on the imperative of the fragile security environment around our country, as well as geopolitical restructuring in the region and the world, we should try to take our further steps in cooperation with Russia, seeking to restore the minimal rights of the Artsakh Armenians.

¹ Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

Despite the existing, sometimes conflicting views, it must be stated that the hostilities were stopped by Russia's own efforts. Subsequent events, including the deployment of Russian peacekeepers in Nagorno-Karabakh, show that only Russia can be the guarantor of our country's security in the foreseeable future. Therefore, in relations with Russia, we must proceed from a practical policy, not an imaginary one. It is necessary to find a way out, take steps in accordance with mutual interests, clarify the territories, status and other issues provided for by the Kazan document, including the establishment of legal relations with Russia.

Key words: Karabakh conflict, "Kazan Document", Russian Federation, security, status, territories, vision of the conflict settlement.

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հանրությանն առավել հայտնի տարբերակներից մեկը կապված է 2011 թ. բանակցություններում կողմերին ներկայացված «Կազանյան» անվանումը ստացած աշխատանքային փաստաթղթի հետ, որը արդի պայմաններում նոր դերակատարություն կարող է ունենալ: Դա պայմանավորված է առնվազն հետևյալ հանգամանքներով: Նախ՝ 2020 թ. Ադրբեջանի կողմից Արցախի դեմ ուղղված ռազմական գործողություններից հետո հիմնախնդիրն այդպես էլ մնում է չկարգավորված [21], անկախ այդ առթիվ պաշտոնական Բաքվի պարբերաբար կատարվող հայտարարություններից [14] ու Լեռնային Ղարաբաղ անվանումը չօգտագործելու ՄԱԿ-ի ամբիոնից հնչեցվող կոչերից [15]: 2020 թ. պատերազմից հետո ադրբեջանական կողմի ամենատարբեր մեթոդներով Արցախը վերջնականապես հայաթափելուն ուղղված շարունակական գործողությունները հենց այդ մասին են խոսում [5]: Երկրորդ՝ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում որպես աշխատանքային տարբերակ, փաստորեն այն կողմերին ներկայացված վերջին փաստաթուղթն է հանդիսանում: Հետևաբար չի բացառվում, որ ապագա բանակցությունների ինչ-որ փուլում կարող են օգտագործվել հենց դրանում արձանագրված դրույթները: Ճիշտ է, դրանից հետո նույնպես հիմնախնդրի կարգավորման տարբեր առաջարկություններ են հնչեցվել, սակայն դրանք այդպես էլ փաստաթղթային տեսք չեն ստացել: Ավելին՝ 2019 թ. Մինսկի խմբի համաձայնագրահները, «*հերքելու համար Մինսկի խմբի գործընթացի բնույթի վերաբերյալ հրապարակային հակասական հայտարարությունները*», համատեղ հայտարարությամբ ևս մեկ անգամ ներկայացրել են կարգավորման սկզբունքներն ու տարբերը, որոնք պետք է ընդգրկվեն 2009-2012 թթ. առաջարկությունները¹: Վերջապես՝ Կազանյան

փաստաթղթի կարևորությունը պայմանավորված է ինչպես նրանում տեղ գտած ձևակերպումների, այնպես էլ դրա նախաձեռնողը համարվող Ռուսաստանի Դաշնության՝ Ղարաբաղյան հիմնախնդրում ունեցած բացառիկ դերակատարությամբ: Պատմական տարբեր ժամանակներում այդպիսի դերակատարություն Ռուսաստանը միշտ էլ ունեցել է, սկսած ցարական ժամանակաշրջանից մինչև 1994 թ. հրադադարի հաստատում [13] և 2016 թ. սարիլյան առնակատում: Սակայն 2020 թ. պատերազմից հետո, նաև ռուսական խաղաղապահների տարածաշրջան մուտքով պայմանավորված, նրա տեղն ու դերը նոր իմաստ ու բովանդակություն են ստացել²:

Քանի որ փաստաթուղթը պաշտոնապես չի հրապարակվել³, հենվելով տարբեր պաշտոնյաների, վերլուծաբանների և ՉԼՄ-ներում տեղ գտած հրապարակումների վրա, կփորձենք ներկայացնել, թե ինչպիսի շեշտադրումներ են առկա Կազանյան փաստաթղթում, ինչպիսի տարբերություններ և նմանություններ ունի այն միջնորդների նախորդիվ ներկայացրած «Մադրիդյան» անվանումը ստացած փաստաթղթի հետ: Վերջապես, ինչպիսի դերակատարություն կարող է ունենալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարի տեսանկյունից, հաշվի առնելով հատկապես 2020

կալոր կարգավիճակ, որը կապահովի անվտանգության և ինքնավարության երաշխիքներ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղին միացնող միջանցք, Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի որոշում իրավականորեն պարտադիր կանարտահայտության միջոցով, բոլոր ներքին տեղահանված անձանց և փախստականների՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադարձի իրավունք և անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղաբար գործողություն: Համանախագահներն ընդգծում են, որ այս սկզբունքներն ու տարրերը պետք է լինեն հակամարտության կարգավորման ցանկացած արդար և կայուն կարգավորման հիմքը և պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն: Ցանկացած փորձ՝ այս կամ այն սկզբունքները կամ տարրերը մյուսներից վեր դասելու, անհնար կրթածնի հավասարակշռված լուծման սպաստվումը»: Տես՝ [18]:

² Այս հանգամանքը առավել ակնհայտորեն դրսևորվեց Ուկրաինայի շուրջ տեղի ունեցող զարգացումներում, մասնավորապես Ռուսաստանի Դաշնության կողմից Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունների անկախության ճանաչման համատեքստում:

³ Ոչ պաշտոնապես Կազանի փաստաթղթի առանցքային դրույթները՝ տարածքներ, կարգավիճակ, անվտանգություն, փախստականներ, հրապարակվել է 2016 թվականին՝ լրագրող Թաթուլ Հակոբյանի կողմից: Տես՝ [11]:

¹ Ըստ այդմ՝ «*Արդար և կայուն կարգավորումը պետք է հիմնված լինի Հեղինկյան եզրափակիչ ակտի հիմնական սկզբունքների վրա, այդ թվում, մասնավորապես, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքները: Այն նաև պետք է ընդգրկի 2009-2012 թվականներին համանախագահ երկրների նախագահների առաջարկած տարրերը՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանին, Լեռնային Ղարաբաղի ժամանա-*

թվականի 44-օրյա պատերազմից հետո ստեղծված տարածաշրջանային իրողությունները:

Ինչպես հայտնի է, դեռևս Կազանյան փաստաթղթին նախորդած ժամանակաշրջանում, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում հերթական անգամ սկսեց նախաձեռնություն ցուցաբերել հենց ռուսական կողմը: Այդ առումով բավականին խոսում է 2008 թվականի նոյեմբերի 2-ին Ադրբեյջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների ընդունած Մայենդորֆյան հռչակագիրը [17]: 2008 թ. ռուս-վրացական պատերազմը իր ազդեցությունն էր դրոշմել Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության և սեփական շահերի պաշտպանության վճռականության տեսանկյունից: Դրանով էր նախևառաջ պայմանավորված վերջինիս՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ցուցաբերած նախաձեռնողականությունն ու ակտիվությունը, ինչը միտված էր թե՛ իր անմիջական սահմանների մոտ նոր պատերազմի հնարավորությունը կանխելուն, թե՛ ավանդական շահերի գոտում սեփական դիրքերի ամրապնդմանը [24]: Հիմնախնդրով զբաղվողների կողմից շեշտադրվող հանգամանքը, որ Կազանյան փաստաթուղթը հանդիսանում է Մադրիդյան սկզբունքների հենքով բանակցված աշխատանքային տարբերակներից մեկը [7] և ըստ էության շատ քիչ է տարբերվում նախորդիվ ներկայացրած «Մադրիդյան» տարբերակից [4], ևս խոսում է վերոնշյալ փաստարկի մասին: Այսինքն՝ եթե Մայենդորֆյան հռչակագրի ընդունումը նպատակ ուներ նախևառաջ բացառել Հարավային Կովկասում նոր պատերազմի բռնկումը, ապա Մադրիդյան սկզբունքներին համահունչ, բայց, այսպես ասած, սեփական ձևակերպումներով արձանագրված Կազանյան փաստաթղթը միտված էր Ռուսաստանի հեղինակության բարձրացմանն ու դիրքերի հետագա ամրապնդմանը: Այդուհանդերձ դիվանագիտական էթիկան պահելու և կառուցողական մթնոլորտ ապահովելու համար, ինչպես ընդունված է միջազգային հարաբերություններում, այն համաձայնեցվել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ⁴:

Մամուլում տեղ գտած հրապարակումները նույնպես թույլ են տալիս փաստելու, որ այն իրոք բավականին նմանություններ ունի «Մադրիդյան սկզբունքների» հետ: Ըստ «Անի» հայկական

հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված հրապարակման, որն անուղղակիորեն հաստատվել է նաև պաշտոնական մակարդակում⁵, Կազանյան փաստաթուղթը ենթադրում է հակամարտության կարգավորման հետևյալ հիմնական քայլերը՝ ըստ հերթականության:

1. Հայկական ուժերը դուրս են գալիս Ադրամի, Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Չանգելանի և Ղուբաթլուի շրջաններից (ավելի քան 4 հազ. քառ. կմ):

2. Լեռնային Ղարաբաղը նախկին ԼՂԻՄ սահմաններում, ինչպես նաև Քարվաճառն (Քելբաջար) ու Լաչինը ստանում են ժամանակավոր անցումային միջանկյալ կարգավիճակ: Լեռնային Ղարաբաղի իշխանությունները, միջանկյալ ժամկետի ընթացքում, մինչև իրավական վերջնական կարգավիճակի հստակեցումը, կիրականացնեն օրենսդիր և գործադիր իշխանություն, կստանան արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակություն:

3. Ադրամի, Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Չանգելանի և Ղուբաթլուի շրջաններ են վերադառնում ներքին տեղահանված անձինք: Ստեղծված նոր ստատուս քվոյի պայմաններում Ղարաբաղ-Ադրբեյջան սահմաններում տեղակայվում են խաղաղապահ ուժեր: Քարվաճառի և Լաչինի ոչ միջանցքային մասի վերադարձը տեղի է ունենում այն բանից հետո, երբ անցկացվում է քվեարկություն՝ որոշելու Լեռնային Ղարաբաղի իրավական վերջնական կարգավիճակը:

4. Լեռնային Ղարաբաղում անցկացվում է վերջնական իրավական կարգավիճակը որոշելու շուրջ քվեարկություն [8]:

Այսինքն՝ ինչպես նախորդ տարբերակներում, այստեղ ևս առանցքային են դիտվել երեք հիմնական՝ տարածքների վերադարձի, կարգավիճակի և խաղաղապահների միջոցով անվտանգությանն առնչվող հարցեր, ճիշտ է տարբեր հերթականությամբ: Ահա սրանք են Կազանյան փաստաթղթի առանցքային կետերը: Սրանից բացի իհարկե կան մի շարք այլ մանրամասներ, ըստ մամուլում հայտնված տեղեկատվության՝ 14 կետերից բաղկացած, որոնք վերաբերում են երկու կողմերի փախստականների վերադարձին, անվտանգության միջազգային երաշխիքներին՝ համաձայնագրի կատարումն ապահովելու համար և այլ՝ հիմնականում հումանիտար բնույթի հարցերի [4]: Բանակցություններում անմիջականորեն

⁴ Դրա մասին է վկայում ինչպես բուն կազանյան հայտարարության տեքստում համանախագահող երկրների հասցեին ասված գնահատանքի խոսքերը, այնպես հանդիպումից առաջ (տես՝ [26]) ու հետո (երեք երկրների նախագահների հանդիպումը տեղի է ունեցել 2011 թ. հունիսի 24-ին) կատարած հայտարարությունները: Տես՝ [20]:

⁵ Այս մասին մասնավորապես նշել է ՀՀ ԱԳԾ մամուլի քարտուղար Տիգրան Բալայանը, շեշտելով, որ «Անի» հայկական հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված «Կազանյան փաստաթուղթը» անվանումով հրապարակումը փորձագիտական աշխատանքի արգասիք է: Տես՝ [6]:

ներգրավված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2016 թ. հարցազրույցներից մեկի համաձայն՝ կողմերը մի քանի անգամ մոտ էին այդ փաստաթուղթը ստորագրելուն, որտեղ բոլոր այդ սկզբունքները հստակ արտացոլված էին: Այսինքն՝ հայկական կողմերը՝ Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը, թողնում են այն տարածքները, որոնք վերցված են որպես անվտանգության գոտի: 2011 թ. թվում էր, թե մենք արդեն մոտեցել ենք եզրագծին, պատրաստ ենք փաստաթղթի ստորագրմանը: ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահները համոզված էին, որ մենք կստորագրենք, բայց Ադրբեյջանը հրաժարվեց: Ռուսաստանի նախագահը, բացելով այդ հանդիպումը, ասաց՝ շատ լավ է, որ մենք հասել ենք խաղաղ կարգավորման օրվան: Ելույթ ունեցավ Ռուսաստանի արտգործնախարար Լավրովը: Հետո ելույթ ունեցավ Ադրբեյջանի նախագահը՝ ասելով, որ իհարկե, ցանկանում են խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, բայց նրանց մոտ դեռևս հարցեր են մնացել, և թվարկեց ութ կամ ինը կետ [10]: Ըստ էության կողմերն այդպես էլ չկարողացան համաձայնության գալ մասնավորապես հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. ինչպե՞ս են շաղկապվելու Քարվաճառի վերադարձն ու Լեռնային Ղարաբաղում անցկացվելիք հանրաքվեի՝ քվեարկության ժամկետները,

2. միջանկյալ կարգավիճակից հետո Քարվաճառը ե՞րբ է անցնելու Ադրբեյջանի վերահսկողության տակ,

3. ե՞րբ են վերադարձվելու Լաչինի շրջանի ոչ միջանցքային մասերը,

4. ինչպիսի՞ կարգավիճակ է ունենալու Լաչինի միջանցքը,

5. Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի քվեարկությանը ովքե՞ր իրավունք ունեն մասնակցելու և ի՞նչ համամասնությամբ [8]:

2016 թ. ապրիլին խոսելով Կազանյան փաստաթղթի մասին ՌԴ ԱԳ նախարարը նույնպես հաստատել է, որ «*որպես այդ դեպքերի անմիջական մասնակից կարող եմ ասել, որ Հայաստանը չի մերժել Կազանի փաստաթուղթը*» [25], իսկ մամուլի ասուլիսին մասնակցող Հայաստանի ԱԳՆ ղեկավար Էդվարդ Նալբանդյանը շեշտել էր, որ Կազանի փաստաթուղթը մերժել է Ադրբեյջանը [9]:

Կազանյան փաստաթղթի ճարտարապետը հանդիսացող ռուսական կողմի այս և այլ հայտարարություններից կարելի է ենթադրել, որ Կազանյան փաստաթղթի իրացումը, որի դրույթները մշակվել են տարիների ընթացքում, առնվազն չեն հակասել Ռուսաստանի տարածաշրջանային շահերին, ինչը չենք կարող ասել 2020 թ. հետպատերազմյան արդի

իրողությունների մասին, որի վերաբերյալ հենց նույն ՌԴ-ում կարծիքները տարբեր են [22]: Ավելին՝ քանի որ փաստաթուղթը ներկայացվել էր հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված միակ կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համաձայնությամբ [26], ապա կարելի է ասել նրա իրացումը, համենայնդեպս բացահայտորեն, չէր հակասում նաև կառույցը համանախագահող մյուս երկրների շահերին: Բացի դրանից, փաստաթղթում արձանագրված դրույթները, զուտ բովանդակային առումով համապատասխանում են հակամարտությունների կարգավորման միջազգային իրավունքի հայտնի սկզբունքներին, որոնք ամրագրված են Հելսինկյան եզրափակիչ ակտում [27]: Այս տեսանկյունից Կազանյան փաստաթուղթն ունի նույն կարգավիճակը, ինչ Մադրիդյանը: 2016 թ. ապրիլի 15-ին լրագրողների հետ զրույցում, ՀՀ այն ժամանակվա ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանի պնդմամբ՝ Կազանի փաստաթուղթն, ըստ էության, Մադրիդյան սկզբունքներն են՝ որոշակի փոփոխությունների ենթարկված, որոնք ԼՂՀ և Հայաստանի համար ավելի դրական դրույթներ են պարունակում [4]: Փաստաթղթի աշխատանքային տարբերակի կարևորագույն դրույթները առաջին անգամ հանրությանը ներկայացրած Թաթուլ Հակոբյանի կարծիքով՝ Կազանի փաստաթուղթը, ինչպես և դրան նախորդած Մադրիդյան տեքստը, հիմնված են հիմնականում 4 սկզբունքների վրա: Համեմատության մեջ, անկասկած, Կազանի առաջարկները հայկական կողմի/երի համար ավելի անընդունելի են, քան Մադրիդյան տեքստն է [7]: Մասնավորապես՝ Մադրիդյան փաստաթղթում, որպես առաջին կետ նշված է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և օգտագործված է պլեբիսցիտ տերմինը, մինչդեռ Կազանի տեքստում կարգավիճակը նշված է չորրորդ կետում, իսկ պլեբիսցիտ իրավական ուժ ունեցող բառի փոխարեն գրված է «պարտադիր ուժ ունեցող կամարտահայտություն» ձևակերպումը [7]: Չխորանալով «Կազանյան» տարբերակում ձևակերպված դրույթների մանրամասնություններում, պետք է ասել, որ ընդհանրապես, դիտարկելով բանակցային գործընթացում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման առանցքային հիմնահարցի՝ կարգավիճակի առաջնայնությունը, ակնհայտ է դառնում, որ 1998 թ. «Փաթեթային տարբերակից» հետո արցախահայության կարգավիճակի հարցը աստիճանաբար իր տեղը զիջել է այլ բաղադրատարրերի [2, էջեր 179-184], դրանից բխող վտանգներով:

Պետք է արձանագրել նաև, որ եթե Մադրիդյան տարբերակի իրականացման պատասխանատու էին համարվում ԵԱՀԿ

Մինսկի խմբի համանախագահները՝ ի դեմս Մինսկի խմբի անդամ պետությունների, ապա ակնհայտ է, որ Կազանյան փաստաթղթի իրականացման պատասխանատուի դերում հիմնականում հանդես էր գալու Ռուսաստանը: Այս առումով է առավելապես այն տարբերվում Մադրիդյան սկզբունքներից: Մի քանի երկրների ներգրավվածության հանգամանքը առաջին հայացքից դրական տպավորություն թողնելով, իրականում, Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման դեպքում հնարավոր է բացասական դերակատարություն ունենա, պայմանավորված նույն միջնորդ երկրների միջև գոյություն ունեցող տարածայնություններով, ինչպես օրինակ տեղի ունեցավ 1994 թ. հենց նույն Ղարաբաղյան կարգավորման գործընթացում⁶:

Անդրադառնալով Կազանյան փաստաթղթի հիմնական շեշտադրումներին, մեր կարծիքով ներկայումս նրա կարևորությունը պետք է պայմանավորել ոչ միայն դրանում ներառված կետերով, որոնցից կարևորների մասին արդեն իսկ նշվել է: Բանն այն է, որ 2020 թ. 44-օրյա ռազմական գործողություններից հետո քաղաքական շարժառիթներն ավելի ծանրակշիռ երանգավորումներ են ձեռք բերել, կապված ինչպես պատմական ու իրավական գործոնների հետին պլան մղումով⁷, այնպես էլ տարածաշրջանի աշխարհաքաղաքական փոփոխություններով, հատկապես թուրք-ադրբեջանական տանդեմի դիրքերի ուժեղացմամբ ու Ռուսաստանի Դաշնության կարևոր դերակատարությամբ:

2020 թ. պատերազմից հետո Կազանյան փաստաթղթում արձանագրված դրույթներից ոմանք ադրբեջանական ագրեսիայի հետևանքով «զերակատարվել» են: Իտսքը նախևառաջ վերաբերում է տարածքների վերադարձին և անվտանգության ապահովման նպատակով խաղաղապահների տեղակայմանը: Մյուս բոլոր դրույթները ոչ միայն կոպտորեն խախտվել են, այլև սպառնալիքի տակ է հայտնվել և հետին պլան մղվել հակամարտության կարգավորման առանցքը կազմող կարգավիճակի խնդիրը⁸: Հետևաբար, ելնելով արդի իրողություններից պետք է փորձել ՌԴ շահերի հետ համատեղմամբ իրականացնել մեր հետագա քայլերը, ձգտելով

վերականգնել մեր նվազագույն իրավունքները: Տեսանելի ապագայում այս խնդրի իրականացման թերևս լավագույն միջոցը կարող է լինել հիմնախնդրի լուծումը Կազանյան փաստաթղթում ամրագրված սկզբունքների վրա հիմնվելով, հաշվի առնելով ինչպես դրանում ամրագրված բայց դեռևս չիրագործված դրույթները, այնպես էլ, որպես Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխավորի ռուսական խաղաղապահ ուժերի կարգավիճակի հատկացումը: Խաղաղապահների հարցը հակամարտության կարգավորման բոլոր տարբերակներում մշտապես առանցքային տեղ է զբաղեցրել, պայմանավորված դրա, որպես Ադրբեջանի և Հայաստանի, իսկ ավելի լայն համատեքստում նաև տարածաշրջանի վրա ազդեցություն գործելու հիմնական մեխանիզմի հնարավորություններով⁹: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ որպես տարածաշրջանային գլխավոր խաղացողի ՌԴ-ի հիմնական խնդիրներից մեկը ևս կապված է լինելու խաղաղապահներին հնարավորինս երկար Արցախում պահելը, որի հետ իրավապայմանագրային ձևաչափի ամրագրումը, պետք է համապատասխանի նաև մեր շահերին:

Այսպիսով, 2020 թ. ադրբեջանա-թուրքական տանդեմի՝ Արցախի դեմ ուղղված նվաճողական պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված արդի իրողությունները, այդ թվում նաև ռուսական խաղաղապահների՝ Լեռնային Ղարաբաղում տեղակայումը, ցույց են տալիս, որ ներկայումս և տեսանելի ապագայում հենց ՌԴ-ն կարող է հանդիսանալ մեր երկրի անվտանգության երաշխավորը: Թուրքիայի և Ադրբեջանի ծավալապաշտական անթաքույց նկրտումների պայմաններում, որոնք իրավապայմանագրային տեսք են ստացել 2021 թ. «Շուշիի հռչակագրով» [23], առանց հզոր արտաքին ուժերի հովանավորության արցախահայության (և ոչ միայն) անվտանգ գոյությունը պարզապես հնարավոր չէ: Այսինքն՝ ռուսական զինուժի ներկայությունը պետք է դիտարկել և ՌԴ-ի հետ հարաբերություններ կառուցել հենց այս իրողություններից ելնելով, դրանում չփնտրելով դավադրությունների տեսությանը բնորոշ այլ մեկնաբանություններ: Այս տեսանկյունից արժե հիշատակել Արևմտյան այնպիսի երկրներում ԱՄՆ-ի զինված ուժերի՝ որպես տվյալ երկրների անվտանգության երաշխավորի ներկայությունը, ինչպիսիք են Ճապոնիան [12], Հարավային Կորեան [28], և այլն, որտեղ տասնամյակներ շարունակ գտնվող ամերիկյան զորքերը

⁶ «1994-ին Ռուսաստանի և ՄԽ հակասություններն այն աստիճանի էին սրվել, որ ՀՀ նախագահը պաշտոնապես հայտարարեց, թե մինչև միջնորդներն իրենք չլուծեն իրենց հակասությունները, հակամարտող կողմերի հակասությունների մեղմացմանն ուղղված նրանց գործունեությունը հեռանկար չունի», Տես՝ [1, էջ 143]:

⁷ Իհարկե իրավական և պատմական փաստարկները բոլոր դեպքերում առկա են և կարևոր են նման հակամարտություններում: Տես՝ [3, էջեր 12-47]:

⁸ Դրանք լավագույնս արտացոլված են 2020թ. հրադարարի հաստատման հայտարարությունում: Տես՝ [19]:

⁹ 1994 թ. մայիսյան հրադարարից հետո, հակամարտության կարգավորման խոչընդոտներից մեկն էլ կապված է եղել խաղաղապահների տեղակայման հարցի հետ, քանի որ դրանից էր կախված, թե ով է ունենալու գերակշիռ ազդեցություն Հարավային Կովկասում: Տես՝ [3, էջեր 159-161]:

ամենևին էլ չեն խանգարում այդ երկրների ժողովրդավարական, տնտեսական, մշակութային և մյուս ոլորտների զարգացմանը: Ընդհակառակը հենց այդ հանգամանքն է հնարավորություն տվել պաշտպանական ոլորտին առավել նվազ միջոցներ հատկացնելով, բայց նաև պաշտպանված զգալով, այն ուղղել մյուս ոլորտների զարգացմանը: Հաշվի առնելով ռուս-ուկրաինական հարաբերությունների հնարավոր զարգացումները, երկրի անվտանգության մակարդակը բարձրացնելու նպատակով 2022թ. փետրվարի 9-ին ԱՄՆ զորքերը մշտական հիմունքներով Լիտվայում տեղակայելու առաջարկով է հանդես եկել նախագահ Գիտանաս Նաուսեդան [16]: Այսինքն՝ սա բավականին տարածված և մեզանից առավել զարգացած ու բարձր սուբյեկտայնություն ունեցող երկրների համար ընդունված երևույթ է:

Վերոնշյալը չի նշանակում սակայն, որ պետք է անտեսել մյուս պետությունների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի կամ տարածաշրջանով շահագրգիռ այլ երկրների շահերը: Ընդհակառակը պետք է նրանց ներուժը օգտագործել տնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար, մարդու իրավունքների պաշտպանության և այլ ոլորտներում: Ռուսաստանի տարածաշրջանում վարած քաղաքականությունից իրավացիորեն դժգոհողները պետք է նաև իրավացիորեն հաշվի առնեն տարածաշրջանում ստեղծված իրերի դասավորվածությունը, վերջապես այն հանգամանքը, որ որևէ այլ երկիր պատրաստակամություն կամ հնարավորություն չի ունեցել կանգնեցնելու պատերազմը և պայմաններ ապահովել արցախահայության սեփական հայրենիքում մնալու համար:

Հետևաբար Ռուսաստանի հետ հարաբերություններում պետք է առավելապես ելնել ոչ թե երևակայական, այլ գործնական քաղաքականության դիրքերից և երկուստեք շահերի համապատասխանեցմամբ քայլեր ձեռնարկել Կազանյան փաստաթղթով նախատեսված տարածքների, կարգավիճակի և այլ հարցերի հստակեցման համար: Իհարկե, մենք ավելի հզոր իրավական և պատմական փաստարկներ ունենք ողջ Լեռնային Ղարաբաղի Հայաստանին պատկանելիության վերաբերյալ: Բայց կարծում ենք, որ, որպես տարիներ շարունակված բանակցությունների հետևանքով ձևավորված դրույթների ամբողջություն Կազանյան փաստաթուղթը կարող է արդի ժամանակահատվածում քաղաքական և իրավական հիմք հանդիսանալ Ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու և Այսրկովկասյան այս տարածաշրջանում տևական խաղաղություն հաստատելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Քալայան Տ.** «Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.», Երևան, «Գասպրինտ», - 184 էջ:
2. **Փալստյան Խ.** Քաղաքական բանակցություններ. Տեսություն և պրակտիկա, Երևան, «Վան Արյան», 2007. -288 էջ:
3. **Փաշայան Հ.** Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, 159-161 էջեր, Ստեփանակերտ 2016. - 256 էջ:
4. ԱԳՆ. Կազանի փաստաթուղթը պարունակում է ԼՂՀ և Հայաստանի համար ավելի դրական դրույթներ, <https://arminfo.info/index.cfm?objectid=89A8E880-031A-11E6-B2810EB7C0D21663>,
5. Արցախի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության հայտարարություն, 2 փետրվարի, 2022 թ., www.nssartsakh.am/hy/news/Հայտարարություն
6. **Քալայան.** «Անի» կենտրոնի «Կազանյան փաստաթուղթը» փորձագիտական աշխատանքի արգասիք է: <https://www.panarmenian.net/arm/news/218369/>
7. **Հակոբյան Թ.,** ԵԱՀԿ Մինսկի խումբը սեղանին տեսնում է Կազանի փաստաթուղթը, <https://www.civilnet.am/news/189733/տահկ-մինսկի-խումբը-սեղանին-տեսնում-է-կազանի-փաստաթուղթ/>
8. **Հակոբյան Թ.,** Կազանի փաստաթուղթը 1997-ի փուլայինն է՝ հանրաքվեի հեռանկարով, <https://www.civilnet.am/news/166442/կազանի-փաստաթուղթը-1997-ի-փուլայինն-է-հանրաքվեի-հեռանկարով/>
9. Հայաստանը Կազանի փաստաթուղթը չի մերժել. Լավիրով <https://www.panorama.am/am/news/2016/04/22/Լավիրով-Կազան/1567124>
10. **Սարգսյան.** Ազգային գաղափարն ուժեղ պետությունն է՝ առանց Ադրբեջանի ու Թուրքիայի հետ խնդիրների, <https://armeniasputnik.am/20161117/serj-sargsyan-5509588.html>
11. <https://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/>
12. **Бунин В.** Японо-американский союз безопасности: История и современность: (К 50-летию со дня основания) М. 2000. *РАН. Ин-т дал. Востока. М., 2000. 331 с.*
13. **Казимиров В.** Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, М.: Междунар. отношения, 2009. - 456 с.
14. Алиев заявил, что карабахский конфликт решен, <https://ria.ru/20210625/aliev-1738612289.html>, 25.06.2021, նաև՝ Президент Ильхам Алиев: Минская группа ОБСЕ не должна заниматься нагорно-карабахским конфликтом, так как этот конфликт урегулирован, <https://www.trend.az/azerbaijan/politics/3540179.htm> 1, 12 января 2022 г.

15. Алиев призвал страны мира не использовать название "Нагорный Карабах", <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/12493239>
16. Глава Литвы предложил разместить в стране войска США на постоянной основе, <https://regnum.ru/news/3502996.html>
17. Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации, 2 ноября 2008 год, <http://kremlin.ru/supplement/232>
18. Заявление для прессы сопредседателей Минской группы ОБСЕ о предстоящей встрече президента Алиева и премьер-министра Пашиняна, МОСКВА, ПАРИЖ, ВАШИНГТОН 9 марта 2019 г. <https://www.osce.org/minsk-group/413813>
19. Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 10 ноября 2020 г. <http://kremlin.ru/events/president/news/64384>
20. Заявление сопредседателей Минской группы ОБСЕ, 5 июля 2011 г., <https://www.osce.org/mg/80642>
21. Заявление сопредседателей Минской группы ОБСЕ, МОСКВА/ПАРИЖ/ВАШИНГТОН 13 апреля 2021 г., www.osce.org/minsk-group/483416
22. **Макиенко К.** Как Россия проиграла во второй карабахской войне <https://www.vedomosti.ru/opinion/articles/2020/11/10/846462-rossiya-proigrala> [22]
23. Опубликован полный текст Шушинской декларации, подписанной между Азербайджаном и Турцией, www.trend.az/azerbaijan/politics/3440708.html
24. Пятидневная война, 18.08.2008, <https://www.kommersant.ru/doc/1011909>
25. **Сергей Лавров:** «Армения Казанский документ не отвергала», <https://rusarminfo.ru/2016/04/22/sergej-lavrov-armeniya-kazanskij-dokument-ne-otvergala/>
26. Совместное заявление президентов стран-сопредседателей Минской группы ОБСЕ по нагорно-карабахскому конфликту на саммите «Большой восьмерки», <https://www.osce.org/mg/78195>, 26 мая 2011 г.
27. Хельсинкский Заключительный акт, 1 августа 1975, www.osce.org/ru/ministerial-councils/39505
28. Mutual Defense Treaty Between the United States and the Republic of Korea; October 1, 1953. http://avalon.law.yale.edu/20th_century/kor001.asp

Сдана/Հանձնվել է՝ 22.02.2022

Рецензирована/Գրախոսվել է՝ 18.03.2022

Принята/Ընդունվել է՝ 21.03.2022